ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 342.4 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-24*

ՎԱՉԳԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
vazgenabrahamyan@paara.am
ORCID: 0009-0001-5701-5663

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերը արդի երեք տիպի ժողովրդավարական հանրապետություններում՝ նախագահական (ԱՄՆ), կիսանախագահական (Ֆրանսիա) և խորհրդարանական (Գերմանիա) կառավարման ձևերի պայմաններում, ինչը կարող է նպաստել մեր երկրի առջև ծառացած ներքոնշյալ խնդիրների կարգավորմանը:

Ինչպես ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության իրավական պրակտիկան, քաղաքական ուժին հաջողվում է խորհրդարանում ապահովել կայուն որակյալ մեծամասնություն, ինչի արդյունքում տեսականորեն խորհրդարանական մեծամասնությունը կարող է ընդունել ցանկացած որոշում՝ հաշվի չառնելով փոքրամասնության կարծիքը և պաշտպանել իր Կառավարության ցանկացած որոշում, ուստի խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ կորցնում է իր արդյունավետությունը:

Հաշվի առնելով 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմը, 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազում պարտությունը և դրա շարունակությունը հանդիսացող բազմաթիվ անվտանգային խնդիրներ, ելնելով բանակի վերազինման և մարտունակության բարձրացման անհրաժեշտությունից՝ առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում զինվորականների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ապահովման և զինծառայողների իրավունքների պահպանման հիմնահարցերը:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են համագիտական և հատուկ (համեմատական-իրավական) մեթոդներ:

Արդյունքում կատարված եզրահանգումները փաստում են, որ չնայած խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերը տարբեր են կառավարման ձևով պայմանավորված, սակայն հիշյալ երկրների փորձի ուսումնասիրությունը հնարավորություն կտա լուծելու վերոնշյալ խնդիրները, ուստի առաջարկվել է վերանայել ՀՀ-ում գործող խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերը՝ ներդնելով Ազգային ժողովի պաշտպանության հարցերով հանձնակատարի ինստիտուտը և բարձրացնելով ԱԺ-ի կողմից ընտրվող անկախ սահմանադրական մարմինների ընտրության շեմը:

* Հոդվածը ներկայացվել է 01.06.2023թ., գրախոսվել՝ 15.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

Հիմնաբառեր: *Խորհրդարանական վերահսկողություն, կառավարման ձև, Ազգային ժողով, գործադիր իշխանություն, կառուցակարգ, անվստահության քվե, հանձնաժողովներ:*

Ներածություն

Պետական իշխանության կազմավորման եղանակը, պետական մարմինների ձևավորման կարգը, դրանց միջև լիազորությունների և գործառույթների բաշխումը և փոխգործակցությունն այն հիմնական հատկանիշներն են, որոնցով բնորոշվում է յուրաքանչյուր երկրի կառավարման ձևը:

Առանձնացվում են պետության կառավարման երկու հիմնական ձևեր՝ միապետություն և հանրապետություն, որոնք ունեն իրենց համապատասխան տեսակները[1] (Ներսեսյանց 77): Յուրաքանչյուր պետության բնորոշ է կառավարման իր ուրույն ձևը:

Ներկայումս հիմնականում ընդունված են հանրապետությունների խորհրդարանական, նախագահական և խառը ձևերը: Մի շարք երկրներում վերը հիշատակված մոդելների միաձուլումը առաջացրել է բավական յուրահատուկ կառավարման ձևեր[2] (Чиркин 109):

Ժողովրդավարական պետություններում իշխանությունների տարանջատման սկզբունքն արտահայտվում է զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգում, որը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել հնարավոր չարաշահումները իշխանության որևէ ճյուղի կողմից, ինչի իրականացմանն է ուղղված նաև խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ (Маклаков, Конституционное право 447):

Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրությունը, ապա և սահմանադրական փոփոխություններն աստիճանաբար ընդլայնեցին խորհրդարանի գործառույթները հատկապես գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության ոլորտում: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ-ն անցում կատարեց խորհրդարանական կառավարման ձևին, որը ամբողջապես սկսեց գործել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Ազգային ժողովի վերահսկողական գործառույթներից են պետական բյուջեի ընդունումից հետո վերահսկողությունը բյուջեի կատարման նկատմամբ, պատգամավորների գրավոր և բանավոր հարցերի, խմբակցությունների կողմից հարցապնդումների, վարչապետին անվստահություն հայտնելու, Կառավարության վստահության հարցը քննարկելու, Կառավարության ծրագրին հավանություն տալու, հաշվետվություններ, զեկույցներ լսելու, հանձնաժողովների աշխատանքի և այլ կառուցակարգերով վերահսկողության իրականացնումը Կառավարության նկատմամբ: Սակայն խորհրդարանում մեկ կուսակցության կողմից որակյալ մեծամասություն ունենալը ստեղծում է խնդրահարույց վիճակ: Խորհրդարանական կառավարման հիմքում Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրվեց կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքը, որի ձևավորումը նախատեսված է «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (Պողոսյան և Սարգսյան 109): Ընտրական օրենսգիրքը փոքրամասնության և մեծամասնության միջև լրացուցիչ մանդատների վերաբաշխման, ընտրությունների երկրորդ փուլ նախատեսելու օգնությամբ, կոալիցիա կազմելու միջոցով ապահովում է, որ խորհրդարանում մեկ կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքն ունենա մանդատների ընդհանուր թվի առնվազն 54 տոկոսը՝ դրանով իսկ երաշխավորելով

[1] Մասնագիտական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ պետության կառավարման ձևերի դասակարգման վերաբերյալ:

[2] Կան միապետություններ, որտեղ նկատվում են հանրապետական կառավարման ձևի տարրեր և հակառակը (ԱՄԷ, Մալազիա, ԿԺԴՀ):

կայուն մեծամասնության առկայությունը խորհրդարանում: Միաժամանակ Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ մյուս՝ ընդդիմադիր կուսակցությունների մանդատների ընդհանուր թիվը չի կարող պակաս լինել Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից՝ դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով խորհրդարանական ընդդիմության առավել ակտիվ գործունեության համար: Ինչպես ցույց տվեցին Ազգային ժողովի նախորդ երկու արտահերթ ընտրությունների արդյունքները, հաղթող քաղաքական ուժին հաջողվում է խորհրդարանում ապահովել կայուն որակյալ մեծամասնություն, ինչի հետևանքով փոքրամասնությունը կորցնում է դերակատարությունը, և գրեթե ի չիք է դառնում փոքրամասնությանը վերապահված գործիքակազմի կիրառումը, և խորհրդարանական վերահսկողությունը կորցնում է իր արդյունավետությունը: Այսպիսի պայմաններում խորհրդարանական մեծամասնությունը տեսականորեն կարող է ընդունել ցանկացած որոշում՝ հաշվի չառնելով փոքրամասնության կարծիքը և պաշտպանելով իր Կառավարության ցանկացած որոշում: Արդյունքում իշխող ուժը կարող է անկախ սահմանադրական մարմիններում ընտրել /3/5-րդ ձայներով/ իրեն հարմար ցանկացած անձի (Ազատություն ռադիոկայան և Հայկական ժամանակ), ինչն առաջացնում է նաև անաչառության հետ կապված խնդիրներ՝ կասկածի տակ դնելով խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը այդ մարմինների նկատմամբ:

ՀՀ-ում խորհրդարանական կառավարման համակարգին անցնելուց հետո առաջացան մի շարք խնդիրներ, որոնց շարքում առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում զինվորականների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ապահովման և զինծառայողների իրավունքների պահպանման հիմնահարցերը, որոնք ծառացած են բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում: Հաշվի առնելով 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմը, 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազում պարտությունը և դրա շարունակությունը հանդիսացող բազմաթիվ անվտանգային խնդիրներ, ելնելով բանակի վերազինման և մարտունակության բարձրացման անհրաժեշտությունից՝ առաջարկում ենք այդ ոլորտում ավելացնել ժողովրդի կողմից առաջնային քվե ստացած խոհրդարանի վերահսկողական գործառույթները: Լուրջ խնդիրների առկայությունը հավաստվում է նաև Ազգային ժողովի կողմից վերը նշված պատերազմական գործողությունների պատճառները վեր հանելու համար քննիչ հանձնաժողովների ստեղծմամբ (Քննիչ հանձնաժողովների վերաբերյալ), որոնց գործունեության արդյունավետության մասին կարելի է վերապահումով խոսել: Սահմանադրության 108-րդ հոդվածի կարգավորումները պառլամենտական փոքրամասնությանը հնարավորություն չեն տալիս իրականացնելու անհրաժեշտ վերահսկողություն, քանի որ, գործող կարգի համաձայն, քննիչ հանձնաժողովներում անդամների մեծամասնությունը իշխող կուսակցության ներկայացուցիչներ են:

Ուսումնասիրելով և համեմատական վերլուծության ենթարկելով երեք առաջատար ժողովրդավարական երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության պառլամենտների կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության մոդելները՝ նպատակ ենք հետապնդել ներկայացնել առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

Դիտարկենք ԱՄՆ-ում գործադիր իշխանության նկատմամբ Կոնգրեսի վերահսկողական լիազորությունները և դրանց իրականացման առանձնահատկությունները: Առաջին հերթին, նախագահական հանրապետությունը ենթադրում է խորհրդարանական վերահսկողության փոքրաթիվ ձևերի առկայություն՝ համեմատած կիսանախագահական կամ խորհրդարանական հանրապետությունների հետ (Лафитский 117): Այդ ձևերը փոխկապակցված են և բաժանվում են երեք խմբի: Առաջին խումբը ներառում է Կոնգրեսի պալատների

անցկացրած նստաշրջանները, ամերիկյան խորհրդարանի երկու պալատների հանձնաժողովների հետաքննական լիազորությունները, Կոնգրեսի օժանդակ ծառայությունների (հետազոտական ծառայություն, բյուջետային և գլխավոր աուդիտի գրասենյակներ) գործունեությունը, տեղեկատվական վերահսկողությունը: Այնպիսի միջոցներ, ինչպիսիք են Կոնգրեսի կողմից՝ պատերազմի և խաղաղության հարցերի վերաբերյալ Նախագահի որոշումների հաստատումը, միջազգային պայմանագրերի կնքումը, պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկումը՝ իմպիչմենտի կամ պաշտոնանկության ընթացակարգով, վերահսկողության ձևերի երկրորդ խումբն են: Երրորդ խումբը ներառում է խորհրդարանի կողմից բյուջեի հաստատումը և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը (Иванян 139-141): Սակայն, այդ ձևերը միշտ չէ, որ կարող են կիրառվել խորհրդարանի կողմից: Որոշ դեպքերում ազդեցություն են ունենում այս կամ այն պալատի կուսակցական կազմը և Նախագահի կուսակցական պատկանելությունը (օրինակ, եթե մեկ պալատը վերահսկվում է պետության ղեկավարի քաղաքական կողմնակիցների կուսակցության կողմից, ապա խորհրդարանական վերահսկողության մեխանիզմները կարող են շատ թույլ կիրառվել): Եթե դա տեղի չունենա, ապա Ներկայացուցիչների պալատի և/կամ Սենատի մեծամասնությունը կարող է հակադրվել գործադիր իշխանությանը որոշ առանցքային հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Այդ դեպքում խորհրդարանի կողմից նախագահական հանրապետությունում նախատեսված վերահսկողական միջոցների կիրառումն ավելի հավանական է: Նման իրավիճակ էր ԱՄՆ որոշ նախագահների պաշտոնավարման տարիներին (Уилсон 317-318):

ԱՄՆ-ն երկկուսակցական քաղաքական համակարգ ունեցող պետություն է: Դեմոկրատական և հանրապետական կուսակցությունները, միմյանց փոխարինելով, իրենց ձեռքում են պահում երկրի բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունները (Քեռյան 241): Ուստի ԱՄՆ-ում ձևավորված կայուն կուսակցական համակարգը հնարավորություն է տալիս ապահովել արդյունավետ վերահսկողություն: Այնտեղ մրցող ուժերին խորհրդարանում չի հաջողվում ստանալ կայուն որակյալ մեծամասնություն (BBC and The American presidency project), ինչի արդյունքում ձևավորվում է ուժեղ ընդդիմություն, որի շնորհիվ խորհրդարանական վերահսկողությունն արդյունավետ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքրամասնությունը չի օտարվում իշխանության իրականացման գործընթացից, և խոչընդոտներ չեն առաջանում նրա լիազորություններն իրականացնելու ճանապարհին:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կուսակցական խիստ կարգապահության բացակայությունը և Կոնգրեսում առկա կուսակցական խմբերը (կոկասները) երբեմն խոչընդոտում են վերահսկողության իրականացմանը: Կառավարությանը վերահսկելու՝ խորհրդարանի լիազորությունների մեկ այլ սահմանափակում է ԱՄՆ սահմանադրական իրավունքի հայեցակարգով իրավաչափ համարվող՝ նախագահի ժամանակավոր լիազորությունների ճանաչումը, որոնք նախատեսված չեն Սահմանադրությամբ, բայց որոնք պետության ղեկավարը կարող է ստանձնել որոշակի քաղաքական կամ տնտեսական լարված վիճակում: Օրինակ, երբ տարբեր բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում (պատերազմներից մինչև գործադուլներ) նախագահները Կոնգրեսից արտակարգ լիազորություններ են խնդրում մինչև նման հանգամանքների վերացումը՝ համաձայն 1976 թվականի Համազգային արտակարգ դրության վերաբերյալ օրենքի (Холмс 43-46):

Խորհրդարանական վերահսկողական կառուցակարգեր կիրառվում են նաև ռազմական ոլորտում: ԱՄՆ-ի խորհրդարանը ռազմական ոլորտում իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է Կոմիտեների միջոցով: Կոնգրեսի յուրաքանչյուր պալատ կարող է վերահսկողական լիազորությունները փոխանցել իր անդամներից կազմված կոմիտեներին: Գործադիր մարմնի գործունեությունը հետաքննելու՝ կոմիտեի իրավասությունները զգալի են, քանի դեռ

այդ հարցը գտնվում է իր վերահսկողության ներքո (Law library of Congress 28): Ե՛վ ներկայացուցիչների պալատը (The Committee on Armed Services), և՛ Սենատը (Senate Committee on Armed Services) ունեն իրենց Զինված ուժերի կոմիտեները: Դրանց իրավասության մեջ են մտնում սպառազինության, ավիացիոն և տիեզերական համակարգերի, ռազմական գործողությունների, ընդհանուր պաշտպանության, նավատորմի և ռազմաօդային ուժերի, զինված ուժերի ծառայողների վարձատրության, կրթության, առաջխաղացման, թոշակի անցնելու, արտոնությունների և այլ հարցերի նկատմամբ վերահսկողությունը:

Այսպիսով, ԱՄՆ-ում առկա կայուն կուսակցական համակարգը, ձևավորված ավանդույթները հնարավորություն են տալիս իրականացնել արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն:

Դիտարկենք Ֆրանսիայում գործող մոդելը: Ըստ կառավարման ձևի՝ Ֆրանսիան (V Հանրապետություն) կիսանախագահական հանրապետություն է: Ֆրանսիայում ձևավորված կայուն կուսակցական համակարգը և պառլամենտարիզմի ավանդույթներն ապահովում են, որ խորհրդարանի ստորին պալատում ոչ մի ուժ չունենա կայուն որակյալ մեծամասնություն. երբեմն ընդհակառակը՝ ստորին պալատում հաղթանակ է տանում նախագահի կուսակցության հակառակորդ ուժը, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել խորհրդարանական վերահսկողությունը (French parliamentary election): Նման պայմաններում փոքրամասնությունն իր լիազորություններն իրականացնում է անխոչընդոտ կերպով, և լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն չի առաջանում:

Ֆրանսիայի Սահմանադրությունը խորհրդարանի կազմակերպման և գործունեության մասին սակավ դրույթներ է պարունակում: Սակայն այդ բացը լրացվում է օրգանական օրենքի, օրենքների և խորհրդարանի պալատների ընդունած կանոնակարգերի միջոցով (Керимов 78):

Ֆրանսիայի Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում է խորհրդարանական վերահսկողության որոշակի ձևեր. «Խորհրդարանական վերահսկողություն» 3-րդ բաժինը սահմանում է տեղեկատվություն ստանալու և Ազգային ժողովի կողմից վերահսկողություն իրականացնելու ընթացակարգերը. Կառավարության ծրագրի կատարողականի ամփոփում, բանավոր և գրավոր հարցեր, քննիչ հանձնաժողովների գործունեություն, մշտական կամ հատուկ հանձնաժողովների տեղեկատվություն պահանջելու լիազորություններ, բյուջետային վերահսկողություն, հանրագրերի ներկայացում, Ազգային ժողովի կողմից Եվրոպական միության կառույցների ներկայացրած առաջարկությունների վերաբերյալ որոշումների ընդունում: Նույն բաժնի հաջորդ գլուխներում նախատեսվում է կառավարության վստահության հարցը դնելու, անվստահություն հայտնելու և հարցապնդումների վերաբերյալ որոշումների ընդունման կարգ, ինչպես նաև Արդարադատության գերագույն պալատի և Հանրապետության դատարանի ձևավորման, նրանց կողմից գործերը վարույթ ընդունելու կարգը (Reglement de L'Assemblee Nationale):

Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ պատերազմ հայտարարելը, ինչպես նաև պաշարման դրության երկարաձգումը ավելի քան տասներկու օրով թույլատրվում են խորհրդարանի կողմից (հոդ. 35): Սակայն, Ազգային ժողովի կանոնակարգի 131-րդ հոդվածի համաձայն՝ այդ թույլտվությունները կարող են տրվել միայն կառավարության նախաձեռնությամբ ներկայացված հատուկ առաջարկի քվեարկությամբ (այսինքն՝ Կառավարությունը, ինչպես նաև պետության ղեկավարը կարող են չդիմել օրենսդիր մարմնին՝ վերջինիս զրկելով ոչ միայն խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու, այլև նման որոշումների ընդունմանը մասնակցելու հնարավորությունից) (Маклаков, Иностранное конституционное право 90):

Խորհրդարանը օժտված է սահմանափակ լիազորություններով նախագահի և կառավարության կողմից արտաքին, ռազմական և ներքին քաղաքականության իրականացման նկատմամբ վերահսկողության ոլորտում: Ֆրանսիայի Սահմանադրության 5-րդ, 15-րդ և 52-րդ հոդվածների համաձայն՝ պետության ղեկավարը, որպես ազգային անկախության, տարածքային ամբողջականության և միջազգային պայմանագրերի պահպանման երաշխավոր, ունի հատուկ լիազորություններ այս հարցերում (Constitution of France):

Չնայած խորհրդարանի սահմանափակ լիազորություններին՝ այնուամենայնիվ ստեղծված են գործուն կառուցակարգեր՝ ապահովելու ռազմական ոլորտում խորհրդարանական վերահսկողություն: Այն իրականացվում է Ազգային ժողովի Ազգային պաշտպանության և զինված ուժերի մշտական հանձնաժողովի կողմից, որի իրավասությունները սահմանված են Աժ կանոնակարգի 36-րդ հոդվածով (Reglement de L'Assemblee Nationale):

Զինված ուժերի երկարաժամկետ ծրագրերը մանրամասնորեն ուսումնասիրվում են Պաշտպանության հանձնաժողովի կողմից՝ Ֆինանսական հանձնաժողովի հետ համատեղ: Բացի դրանից, Պաշտպանության հանձնաժողովը իր մեկ կամ մի քանի անդամի հանձնարարում է հաշվետվություններ գրել այն հարցերի վերաբերյալ, որոնք համարում է արժանի ուսումնասիրության: Հանձնաժողովը լսում է բոլոր այն անձանց, որոնց անհրաժեշտ է համարում զեկույցների կամ կարծիքների պատրաստման կամ իր տեղեկատվական աշխատանքի համար (ներառյալ պաշտպանության և արտաքին գործերի նախարարներին, շտաբի պետերին և սպառազինության գլխավոր պատվիրակին): Այդ լսումները, որպես կանոն, տեղի են ունենում դռնփակ, բայց լսումների արդյունքում հրապարակվում են հաշվետվություններ: Զենքի արտադրության պետական և պետական մասնաբաժնով ընկերությունների նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է Պաշտպանության հանձնաժողովի, ինչպես նաև Ֆինանսական հանձնաժողովի կողմից: Այս հանձնաժողովները կարող են պահանջել տեղեկատվական զեկույցներ (Inter-Parliamentary Union):

Ֆրանսիայում գործող խորհրդարանի վերահսկողական կառուցակարգերի մեջ որոշակի առանձնահատկություններ ունեն նաև հատուկ ստեղծված հանձնաժողովները, սակայն նրանց վերահսկողական լիազորությունները խիստ սահմանափակ են: Օրինակ՝ քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին որոշումը կայացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը: Կուսակցական խմբերը մշտական հանձնաժողովներում ունեն սահմանված տեղեր՝ Ազգային ժողովում իրենց անդամների քանակին համապատասխան, ուստի խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչները, որոնք աջակցում են կառավարությանը, հանձնաժողովներում կազմում են մեծամասնություն: Բացի դրանից, համաձայն օրգանական օրենքի՝ հանձաժողովի գործունեությունը կրում է ժամանակավոր բնույթ՝ վեց ամիս, այն ստեղծելու որոշումը կայացնելու պահից: Քննիչ հանձնաժողովի զեկույցի հրապարակման քաղաքական հետևանքները խիստ սահմանափակ են: Հանձնաժողովի հաշվետվության քննարկում նախատեսված չէ: Քննիչ հանձնաժողովները չեն կարող պատժամիջոցներ կիրառել:

Այսպիսով, կիսանախագահական կառավարման ձև ունեցող Ֆրանսիայում իշխանությունների տարանջատման, զսպումների և հակակշիռների համակարգի ապահովման գործում կարևոր նշանակություն ունեն խորհրդարանի վերհսկողական լիազորությունները: Ձևավորված կայուն կուսակցական համակարգը հնարավորություն է տալիս կանխել իշխող ուժի կողմից գերմեծամասնության ձևավորումը խորհրդարանում, որով ապահովում է փոքրամասնության կողմից արդյունավետ և անխոչընդոտ վերահսկողական լիազորությունների իրացումը:

Դիտարկենք ԳԴՀ-ում գործող մոդելը: Ինչ վերաբերում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը[1], ապա այն խորհրդարանական հանրապետություն է, որտեղ գործում է խորհրդարանի առաջ կառավարության պատասխանատվության ինստիտուտը, ներկայացուցչական մարմինն իրավունք ունի ձևավորելու կառավարություն, իսկ կառավարության պարտավորությունն է զեկուցել խորհրդարանին իր գործունեության մասին, և օրենսդիր մարմնի կողմից կառավարության աշխատանքն անբավարար ճանաչելը հանգեցնում է գործադիր իշխանության բարձրագույն մարմնի հրաժարականին (Макпаков, Иностранное конституционное право 135): Խորհրդարանը կարող է պահանջել հաշվետվություններ՝ օգտվելով կառավարության ցանկացած անդամին իր նիստերին հրավիրելու, ընդհանուր և մասնավոր հարցումներ անելու, ինչպես նաև հետաքննող կոմիտեներ և քննիչ հանձնաժողովներ ստեղծելու իրավունքից: Ավելի օպերատիվ տեղեկատվություն ստանալու համար սահմանվել է հարցերի ժամ: Նախագահական կամ կիսանախագահական հանրապետություններում, ինչպես արդեն նշվեց, օրենսդիր մարմինները չունեն վերը նշված լիազորությունները կամ չունեն դրանք ամբողջ ծավալով: Նախագահը կառավարության ղեկավարը չէ: Նա առաջադրում է կանցլերի թեկնածու, որին ընտրում է Բունդեսթագը ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ կանցլերը վայելում է խորհրդարանի վստահությունը:

Գերմանիայում կայուն կառավարություն ձևավորելու համար գործում է «կառուցողական անվստահության քվեն», որի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ Բունդեսթագն իրավունք ունի անվստահություն հայտնել կառավարությանը, եթե բանաձևի նախագիծը ներառում է նոր կանցլերի թեկնածուի անունը և բովանդակում է խնդրանք Գերմանիայի նախագահին՝ պաշտոնից ազատելու գործող կանցլերին (Зонтхаймер 221): Գերմանիայում, ի տարբերություն Ֆրանսիայի, չկա օմբուդսմենի ինստիտուտ, փոխարենը՝ հանրագրերի կոմիտեն ունի բավական լայն լիազորություններ (Հիմնական օրենքի 45 գ հոդված):

Բացի դրանից, կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողության կարևոր գործիք են հատկապես ընդդիմադիր փոքրամասնության կողմից կիրառվող Դաշնային սահմանադրական դատարանում իշխանության մարմինների միջև վեճերի և Դաշնային կառավարության կողմից որոշ օրենսդրական դրույթների արդյունավետության վերանայման վերաբերյալ գործերի քննարկումը, ինչպես նաև Դաշնային սահմանադրական դատարանի դատավորների ընտրությունը, որը պահանջում է ձայների որակյալ՝ 2/3 մեծամասնություն (Государственное право Германии 158): Բունդեսթագը բաղկացած է խորհրդարանական մեծամասնությունից, որն աջակցում է կառավարությանը և նրա ծրագրի իրականացմանը, և խորհրդարանական ընդդիմությունից, որը ձգտում է այլընտրանքներ առաջարկել կառավարության քաղաքականությանը, ինչպես նաև վերահսկել իշխանությանը: Ինչպես նշում է Կ. Զոնթհայմերը, ընդդիմությունը չունի այն անհրաժեշտ մեծամասնությունը, որը կարող է հաղթել իշխանությանը, ուստի իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը հնարավոր է միայն շատ նեղ սահմաններում: Խորհրդարանական մեծամասնությունը, ընդհակառակը, տեխնիկապես կկարողանար իր կամքը պարտադրել իշխանությանը, բայց դրանում շահագրգռված չէ, քանի որ նրանց նպատակները հիմնականում նույնական են Դաշնային կառավարության նպատակներին (Зонтхаймер 233):

[1] 1956 թվականին ԳԴՀ հիմնական օրենքը լրացվեց մի շարք հոդվածներով, որոնք ամրագրում են կառավարության նկատմամբ խորհրդարանի վերահսկողության կառուցակարգերը. Պաշտպանության հարցերով հանձնակատար, հանրագրերի ինստիտուտ, քննիչ հանձնաժողովներ, կառուցողական անվստահության քվե, բյուջեի հաստատում և այլ հարցեր (Federal ministry of justice):

Չնայած վերը նշված կարծիքին, ԳԴՀ-ում ևս ձևավորված են կայուն կուսակցական համակարգ և խորհրդարանականության ավանդույթներ, ուստի խորհրդարանում ներկայացված ուժերին, որպես կանոն, ևս չի հաջողվում ունենալ կայուն որակյալ մեծամասնություն (Bundestag election 2021):

Խորհրդարանական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ իրականացվում է պաշտպանության հանձնաժողովի և պաշտպանության հարցերով հանձնակատարի միջոցով: Վերջինս հատուկ գործերով խորհրդարանական մարմին է և կոչված է նպաստելու խորհրդարանի կողմից ժողովրդավարական բանակի զարգացմանը, ինչպես նաև վերահսկելու պաշտպանական գործընթացը, որպեսզի բանակը չդառնա «պետություն պետության մեջ»: Այն անկախ է գործադիր իշխանությունից և առաջին հերթին՝ պաշտպանության նախարարից, և ունի զինվորականների ոտնահարված իրավունքները վերականգնելու համար զինվորական իշխանության վրա ազդելու իրական մեխանիզմներ, թեև չի կարող ավելի խոր «ներթափանցել» գործադիր իշխանության ոլորտ, քան ինքը՝ Բունդեսթագը՝ իր վերահսկողական լիազորություններով (այսինքն՝ նրա իրավասությունը չափվում է հենց Բունդեսթագի իրավունքներով) (Трумпель 36-42): Հիմնական օրենքի 45-բ հոդվածի համաձայն՝ հանձնակատարը խորհրդարանի օժանդակ մարմին է (Federal ministry of justice): Նա պատգամավոր կամ քաղաքացիական ծառայող չէ: Ունի հատուկ կարգավիճակ, և նրա գործունեությունը կարգավորվում է 1982 թվականի հունիսի 16-ի Բունդեսթագի պաշտպանության հանձնակատարի մասին դաշնային օրենքով, համաձայն որի՝ նա ընտրվում է գաղտնի քվեարկությամբ Բունդեսթագի անդամների մեծամասնության կողմից (թեկնածու առաջադրելու իրավունք ունեն պաշտպանության հանձնաժողովը և պալատի պատգամավորական խմբերը) (The Parliamentary Commissioner for the Armed Forces): Ընտրական իրավունք ունեցող, 35 տարին լրացած ցանկացած գերմանացի կարող է ընտրվել (Бойцова 96-97): Պաշտոնավարման ժամկետը 5 տարի է, ոչ թե 4՝ ի տարբերություն Բունդեսթագի անդամի: Նրա վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված՝ անհամատեղելիության մասին պահանջները և անձեռնմխելիության իրավունքը: Հանձնակատարի ինստիտուտը նախատեսված է, առաջին հերթին, պաշտպանելու զինվորների հիմնարար իրավունքները: Նրանք բանավոր և գրավոր բողոքներով կարող են դիմել անմիջապես հանձնակատարին՝ շրջանցելով այլ ատյաններ: Հանձնակատարը հետաքննություն է իրականացնում, երբ իրեն հայտնի է դառնում կոնկրետ միջադեպի կամ իրավախախտման մասին՝ պատգամավորական հաղորդագրությունների, զինծառայողների բողոքների, զանգվածային լրատվամիջոցների և այլ աղբյուրների միջոցով:

Հանձնակատարն իրավունք ունի ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն Պաշտպանության դաշնային նախարարությունից և նրան ենթակա ռազմական ու քաղաքացիական բոլոր հաստատություններից և անձանցից, որոնք պարտավոր են տեղեկատվություն տրամադրել և թույլ տալ ծանոթանալու բոլոր փաստաթղթերին: Ցանկացած պահի և առանց նախնական ծանուցման նա իրավունք ունի այցելելու պաշտպանության նախարարության բոլոր ստորաբաժանումներ, բաժիններ, ինչպես նաև նրա հիմնարկներ և զորամասերի տեղակայման այլ վայրեր:

Հանձնակատարը պարտավոր է իր գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց ներկայացնել Բունդեսթագին:

Այսպիսով, պայմանավորված խորհրդարանական կառավարման ձևով՝ ԳԴՀ-ում առկա են պառլամենտական վերահսկողության ընդգրկուն կառուցակարգեր: Ինչպես ցույց են տալիս վերջին ընտրությունների արդյունքները, խորհրդարանական մեծամասնությունը չունի կայուն որակյալ մեծամասնություն, ուստի փոքրամասնությունը օժտված է իր վերահսկողական լիազորություններն իրականացնելու առավել լայն հնարավորությամբ: Ինչպես նաև, ի տարբերություն մյուս՝ քննարկվող երկրներում ռազմական ոլորտում առկա վերահսկողական

կառուցակարգերի, Գերմանիայում գործում են հատուկ մարմիններ, որոնք կարող են նպաստել ռազմական բնույթի խնդիրների լուծմանը:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք եզրակացնել, որ խորհրդարանական վերահսկողության կառուցակարգերը տարբեր են կառավարման տարբեր ձևեր ունեցող պետություններում: Խորհրդարանական վերահսկողության ամենալայն կառուցակարգերն առկա են Գերմանիայում՝ պայմանավորված խորհրդարանական կառավարման ձևով: Քննարկվող երկրներում ձևավորված կառուցակարգերը, կայուն կուսակցական համակարգերը, խորհրդարանականության ավանդույթները, չնայած առկա որոշ խնդիրների, թույլ են տալիս արդյունավետորեն իրականացնելու նախատեսված լիազորությունները՝ զրկելով իշխող ուժերին ցանկացած որոշում ընդունելու և փոքրամասնության կարծիքի հետ հաշվի չնստելու հնարավորությունից:

Ինչպես ցույց տվեց վերոնշյալ երկրների փորձը, խորհրդարանում իշխող ուժին չի հաջողվում ձևավորել կայուն որակյալ մեծամասնություն, ինչի արդյունքնում փոքրամասնությունը կարողանում է իրականացնել իրեն վերապահված լիազորությունները վերահսկողության ոլորտում: Իսկ ՀՀ-ում, ինչպես ցույց են տալիս վերջին ընտրությունների արդյունքները, դեռևս ձևավորման փուլում գտնվող կուսակցական համակարգի անկատարության արդյունքում իշխող ուժը գրեթե միշտ կազմում է կայուն որակյալ մեծամասնություն, ընդունում է ցանկացած որոշում և իր հայեցողությամբ ընտրում պաշտոնյաներին: Կարծում ենք՝ ՀՀ-ում նշված խնդրի լուծում կարող են հանդիսանալ այնպիսի իրավակարգավորումների նախատեսումը, որի արդյունքում կընդլայնվեն խորհրդարանական փոքրամասնության այն իրավունքները, որոնք թույլ են տալիս «արգելափակելու» Ազգային ժողովի մեծամասնության կողմից ընդունվող որոշումները: Այս նպատակով անհրաժեշտ է Ազգային ժողովի կողմից ընտրվող անկախ սահմանադրական մարմինների (ՄԻՊ, Գլխավոր դատախազ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հաշվեքննիչ պալատի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և ԿԲ-ի անդամներ) ընտրության շեմը բարձրացնել՝ պատգամավորների թվի առնվազն 3/5-րդի փոխարեն սահմանելով 2/3-րդ (Ազատություն ռադիոկայան), որի հետևանքով իշխող ուժը ստիպված կլինի հաշվի առնել փոքրամասնության կարծիքը: Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև նոր կառուցակարգերի մշակումը և ներդրումը թույլ կտան բարձրացնել խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը գործադիր իշխանության նկատմամբ հատկապես խորհրդարանական կառավարման պայմաններում:

Զինված ուժերի ոլորտում առկա խնդիրների հաղթահարումը հրամայական պահանջ է դարձրել ՀՀ զինված ուժերի կառավարման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեծացումը: Ուստի, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումներ իրականացնելիս՝ ԳԴՀ-ի օրինակով ներդնել Պաշտպանության հարցերով հանձնակատարի ինստիտուտը և վերջինիս լիազորել զբաղվելու ոչ միայն բանակի և զինծառայողների, այլև պատերազմին մասնակից քաղաքացիական անձանց և ռազմական գործողությունների հետևանքով տուժած անձանց և զոհվածների ընտանիքների հիմնախնդիրներով: Ազգային ժողովում նման ինստիտուտի ներդրումը կնպաստի ՀՀ զինված ուժերում օրինականության ամրապնդմանը, զինվորների իրավունքների պաշտպանությանը՝ միաժամանակ ավելի երաշխավորված դարձնելով զինվորական ծառայությունը երիտասարդների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտպանության ոլորտին ուղղված բյուջեն ևս հաստատվում է Ազգային ժողովի կողմից, այս ինստիտուտի ներդրմամբ Ազգային ժողովը կկարողանա

որոշակիորեն բարելավել վերահսկողությունը զինված ուժերում ծախսերի իրականացման նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ-ում ԱԺ արտահերթ ընտրություններում հաղթող ուժին հաջողվեց հաղթահարել պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-րդ մեծամասնություն, բայց ոչ՝ 2/3-րդ. *Ազատություն ռադիոկայան*. https://www.azatutyun.am/a/31332219.html
2. Նեսեսյանց, Վլադիկ. *Իրավունքի և պետության տեսություն.* Երևան, Նաիրի 2001.
3. Պողոսյան, Վարդան և Նորա Սարգսյան. *ՀՀ 2015թ. խմբագրությամբ սահմանադրությունը*. Երևան 2016.
4. Վահագն Հովակիմյանն ընտրվեց ԿԸՀ նախագահ. *Ազատություն ռադիոկայան*. https://www.azatutyun.am/a/32070147.html կամ Արման Թաթոյանը հեռացավ. Քրիստինե Գրիգորյանը այսօրվանից ստանձնում է ՄԻՊ-ի պաշտոնը. Հայկական ժամանակ. https://www.armtimes.com/hy/article/231814
5. Քեռյան, Գարիկ. *Կուսակցական գործոնը ԱՄՆ-ի քաղաքական համակարգում.* Մ. Մաշտոց համալսարանի լրատու, 2016.
6. Քննիչ հանձնաժողովների վերաբերյալ. http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111232&lang=arm
7. Бойцова, Виктория. *Служба защиты прав человека и гражаднина. Мировой опыт.* Москва. БЕК, 1996.
8. *Государственное право Германии.* Сокращенный перевод немецкого семитомного издания. Том I. Москва, 1994.
9. Зонтхаймер, Курт. *Федеративная Республика Германия сегодня. Основные черты политической системы.* М., 1996.
10. Иванян, Эдуард. *Президенты и власть// США на рубеже веков.* Москва Наука, 2000.
11. *Иностранное конституционное право.* Под редакцией проф. Вячеслав Маклакова. Москва, Юристъ, 1996.
12. Керимов, Джангир*. Парламентское право Франции.* Москва, Норма, 1998.
13. *Конституционное право:* Словарь. Огв. ред. Вячеслав Маклаков. Москва, Юристь, 2001.
14. Лафитский, Владимир. Контрольные полномочия Конгресса США*. Журнал российского права*. Москва, 2000, №12.
15. Трумпель, Константин. Уполномоченный Бундестага ФРГ по обороне как пример деятельности военного омбудсмена. *Правоведение*.СПб.,1998, № 4.
16. Уилсон, Джеймс. *Американское правительство:* Пер. с англ. Москва Издательская группа «Прогресс», «Универс», 1995.
17. Холмс, Стивен. *Введение в конституционное право: восточноевропейское обозрение*. М., 2001, № 4.
18. Чиркин, Вениами́н. Нетипичные формы правления в современном государстве. *Государство и право.* 1994, № 4.
19. About US midterm elections results. *BBC.* https://www.bbc.com/news/world-us-canada-63556122, *The American presidency project*. https://www.presidency.ucsb.edu/statistics/data/seats-congress-gainedlost-the-presidents-party-mid-term-elections
20. Basic Law for the Federal Republic of Germany. *Federal ministry of justice.* https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html,

21. *Bundestag election 2021.* https://www.bundeswahlleiter.de/en/bundestagswahlen/2021/ergebnisse/bund-99.html

22. *Constitution of France.* (4 October 1958) https://www.constituteproject.org/constitution/France_2008.pdf?lang=en ,

23. *French parliamentary election.* http://fingfx.thomsonreuters.com/gfx/rngs/FRANCE-ELECTION/010041FQ34H/index.html

24. *Inter-Parliamentary Union* http://archive.ipu.org/parline-e/reports/CtrlParlementaire/2113_F.htm

25. Parliamentary Oversight of the Executive Branch. *Law library of Congress*. https://tile.loc.gov/storage-services/service/ll/llglrd/2017299150/2017299150.pdf.

26. *«Reglement de L'Assemblee Nationale»* https://www.assemblee-nationale.fr/dyn/15/divers/texte_reference/02_reglement_assemblee_nationale .

27. *Senate Committee on Armed Services.* https://www.armed-services.senate.gov/about/history .

28. *The Committee on Armed Services.* https://armedservices.house.gov/about .

29. *The Parliamentary Commissioner for the Armed Forces.* https://www.btg-bestellservice.de/pdf/80150000.pdf

WORKS CITED

1. HH-um AJh artahert' yntrutyunnerum haght'ogh ujhin hajoghvec haghtaharel patgamavorneri y'ndhanur t'vi d'ayneri arnvazn 3/5-rd mecamasnutyun, bayc och` 2/3-rd [The force that won the early parliamentary elections in Armenia managed to overcome at least 3/5 of the majority of votes from the total number of deputies, but not 2/3]. Freedom Radio Station, https://www.azatutyun.am/a/31332219.html, (In Armenian)

2. Nesesyanc, Vladik. Iravunqi ev petut'yan tesut'yun [Theory of Law and State].Yerevan, Nairi 2001 (In Armenian)

3. Poghosyan, Vardan ev Nora Sargsyan. HH 2015t'. xmbagrut'yamb sahmanadrut'yuny'. [The Constitution of the Republic of Armenia of 2015] Yerevan 2016. (In Armenian)

4. Vahagn Hovakimyann y'ntrvec KY'H naxagah [Vahagn Hovakimyan was Elected Chairman of the CEC.]. Freedom radio station https://www.azatutyun.am/a/32070147.html (In Armenian)

5. Qristine Grigoryany' ayso'rvanic stand'num e' MIP-i pashtony' [Kristina Grigoryan Assumes the Position of Ombudsman Today]. Armenian times https://www.armtimes.com/hy/article/231814 (In Armenian)

6. Qer'yan, Garik. Kusakcakan gorc'ony' AMN-i qaghaqakan hamakargum [The Political System in the United States]. The Bulletin of Mesrop Mashtots University, 2016. (In Armenian)

7. Qnnich hand'najhoghovneri veraberyal [On Investigative Commissions]. http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111232&lang=arm (in Armenian)

8. Bojcova, Viktorija. Sluzhba zashhity prav cheloveka i grazhadnina. Mirovoj opyt [Service for the Protection of the Rights of Human and Citizen. World Experience]. Moscow BEK, 1996. (In Russian)

9. Gosudarstvennoe pravo Germanii. Sokrashhennyj perevod nemeckogo semitomnogo izdanija. Tom I [Abridged Translation of the German Seven Volume Edition. Volume I]. Moscow, 1994 (In Russian)

10. Zonthajmer, Kurt. Federativnaja Respublika Germanija segodnja. Osnovnye cherty politicheskoj sistemy [The Federal Republic of Germany Today. Main Features of the Political System]. Moscow, 1996 (In Russian)

11. Ivakjan, Jeduard. Prezidenty i vlast'// SShA na rubezhe vekov [Presidents and Power// USA at the Turn of the Century]. Moscow, science 2000 (In Russian)

12. Inostrannoe konstitucionnoe pravo. Pod redakciej prof. Vjacheslav Maklakova [Foreign Constitutional Law. Edited by Prof. Vyacheslav Maklakov]. Moscow, lawyer 1996 (In Russian)

13. Kerimov, Dzhangir. Parlamentskoe pravo Francii [Parliamentary Law of France]. Moscow, rule 1996 (In Russian)

14. Konstitucionnoe pravo: Slovar'. Otv. red. Vjacheslav Maklakov [Constitutional Law: Dictionary. Ed-in-Ch. Vyacheslav Maklakov]. Moscow, lawyer 2001 (In Russian)

15. Lafitskij, Vladimir. Kontrol'nye polnomochija Kongressa SshA [Control Powers of the US Congress]. Journal Russian Law 2000, N 12 (In Russian)

16. Trumpel', Konstantin. Upolnomochennyj Bundestaga FRG po oborone kak primer dejatel'nosti voennogo ombudsmena [The Bundestag Commissioner of the Federal Republic of Germany on Defense as an Example of Military Ombudsman Activity]. Jurisprudence, 1998, N 4 (In Russian)

17. Uilson, Dzhejms. Amerikanskoe pravitel'stvo: Per. s angl [American Government: Translated from Engl]. Moscow, Progress publication, 1995 (In Russian)

18. Holms, Stiven. Vvedenie v konstitucionnoe pravo: vostochnoevropejskoe obozrenie [Introduction to Constitutional Law: East European Review]. Moscow 2001, N 4 (In Russian)

19. Chirkin, Veniamín. Netipichnye formy pravlenija v sovremennom gosudarstve [Atypical Forms of Government in the Modern State. State and Law]. State and Law, 1994 N4 (In Russian)

20. About US midterm elections results. *BBC.* https://www.bbc.com/news/world-us-canada-63556122, *The American presidency project*. https://www.presidency.ucsb.edu/statistics/data/seats-congress-gainedlost-the-presidents-party-mid-term-elections

21. Basic Law for the Federal Republic of Germany. *Federal ministry of justice.* https://www.gesetze-im-internet.de/englisch_gg/englisch_gg.html,

22. Bundestag election 2021. https://www.bundeswahlleiter.de/en/bundestagswahlen/2021/ergebnisse/bund-99.html

23. Constitution of France. (4 October 1958) https://www.constituteproject.org/constitution/France_2008.pdf?lang=en ,

24. French parliamentary election. http://fingfx.thomsonreuters.com/gfx/rngs/FRANCE-ELECTION/010041FQ34H/index.html

25. Inter-Parliamentary Union http://archive.ipu.org/parline-e/reports/CtrlParlementaire/2113_F.htm

26. Parliamentary Oversight of the Executive Branch. *Law library of Congress*. https://tile.loc.gov/storage-services/service/ll/llglrd/2017299150/2017299150.pdf.

27. «Reglement de L'Assemblee Nationale» https://www.assemblee-nationale.fr/dyn/15/divers/texte_reference/02_reglement_assemblee_nationale .

28. Senate Committee on Armed Services. https://www.armed-services.senate.gov/about/history .

29. The Committee on Armed Services. https://armedservices.house.gov/about .

30. The Parliamentary Commissioner for the Armed Forces. https://www.btg-bestellservice.de/pdf/80150000.pdf

MECHANISMS OF PARLIAMENTARY OVERSIGHT OVER THE EXECUTIVE POWER UNDER DIFFERENT FORMS OF GOVERNANCE

VAZGEN ABRAHAMYAN
Public Administration Academy of the Republic of Armenia, Ph.D. Student, Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to study the mechanisms of parliamentary oversight over the executive power in three types of modern democratic republics: presidential (USA), semi-presidential (France) and parliamentary (Germany), which can help us to solve the below-mentioned problems that our country is facing.

As the legal practice of the Republic of Armenia shows, a political party can manage to secure absolute majority in the parliament as a result of which theoretically, the parliamentary majority can adopt any decision without taking into account the opinion of the minority and support any decision of its government, so the parliamentary oversight over the executive power loses its effectiveness.

Taking into account the four-day war of April 2016, the defeat in the 44-day Artsakh war of 2020 and the numerous security problems, the need to rearm the army and increase its combat capability, the issues of ensuring parliamentary control over the military and preserving the rights of servicemen have become of particular importance.

In the course of the research, general scientific and special (comparative-legal) methods were used.

The conclusions made prove that although the mechanisms of parliamentary oversight are different depending on the system of government, the study of the experience of the abovementioned countries will provide an opportunity to solve the aforementioned problems, therefore it is proposed to revise the mechanism of parliamentary oversight in RA by applying the institution of Parliamentary Commissioner for the Armed Forces and increasing the threshold for the election of independent constitutional bodies by National Assembly.

Keywords: *Parliamentary oversight, form of government, executive power, mechanism, National Assembly, vote of no confidence, commissions.*

МЕХАНИЗМЫ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ НАД ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТЬЮ ПРИ РАЗНЫХ ФОРМАХ ПРАВЛЕНИЯ

ВАЗГЕН АБРАМЯН
аспирант Академии государственного управления Республики Армения, г. Ереван, Республика Армения

Целью статьи является исследование механизмов парламентского контроля над исполнительной властью в трех типах современных демократических республик: президентской (США), полупрезидентской (Франция) и парламентской (Германия) формах правления, которое может способствовать решению нижеупомянутых проблем, стоящих перед Республикой Армения..

Как показывает юридическая практика РА, политическим партиям удается завоевать абсолютное большинство в парламенте, в результате чего теоретически парламентское большинство может принять любое решение без учета мнения меньшинства и отстаивать любое решение своего правительства, поэтому парламентский контроль над исполнительной властью теряет свою эффективность.

С учетом четырехдневной апрельской войны 2016 года, поражения в 44-дневной Арцахской войне 2020 года и множества проблем безопасности, необходимости перевооружения армии и повышения ее боеспособности особое значение имеют вопросы обеспечения парламентского контроля над вооруженными силами и соблюдение прав военнослужащих.

В ходе исследования использовались общенаучные и специальные (сравнительно-правовые) методы.

Сделанные выводы доказывают, что, хотя механизмы парламентского контроля различны в зависимости от системы государственного управления, изучение опыта вышеуказанных стран даст возможность решить упомянутые проблемы, поэтому предлагается пересмотреть механизм парламентского контроля в РА путем применения института парламентского уполномоченного по делам вооруженных сил и повышения порога избрания независимых конституционных органов Национальным Собранием.

Ключевые слова. *Парламентский контроль, форма правления, исполнительная власть, механизм, Национальное собрание, вотум недоверия, комиссии*.